եւ կերաք զհացն ի հօրքուրանցն, և պահ մի ննջեալ՝ գնացի ի Մղտեսոնցն և անտի ի ժամ. և յետ ժամուն պահ մի նստեալ հետ միաբանիցն մեր և ելեալ եկաք ի տուն եւ զհացն կերաք ի հօրքուրանցն։

Օրերքս Վօյնիկներն եկեալ էին և այսօր տեսաք զի Ժ ձի մեղրէմամ բերլին հարկս թագաւորին։

Բշի (24 Ապրէլ) առաւօտուս գնացի ի ժամ և անտի ի տուն և անտի ի խանութ, և ի ճանապարհին դէմ ե-լաւ ինձ Շամլի Հասան աղան, և օրս տեսի զնա, քան-զի ընդ առաջ նորա երթային կարգ կարգ սպահիք, յետ և յառաջ, յաջ և յահեկ սպասաւորքն և յետոյս կող-մանէ Ը և Թ ձիաւորք. այսպիսի շրջէր ի մէջ քաղա-քիս փառօք։ Եւ օրս բազում տղայի պարալթա կար-միր և ֆէս պատըռտեցին ի զուլլուխներն և չաղչուրի և զաւուխի խօսեցան բազմաց. և ոչ թէ զուլլուխիցն էր բանս, այլ եւ Բ եւ Գ ոգի մի եղեալ էնկիչէրոցն՝ ով ի դէմ ելանէր, նա՛ զսուրն ցուցանէին թէ Զչաղ-չուրն կու տաս՝ նա՛ բարի, թէ չէ՝ կու զարնենք զքեզ, եւ զայլս մերկացուցանէին։ Որպէս ելեալ են ի դէմ մեր Թէրզի Արզմանին եւ Աստուածածնայ եկեղեց-պանն և ըմբռնեալ են զինովք Գ թէ Հանեցէ՛ք զչաղ-չուրքն ձեր եւ սոքա ասացեալ են թէ Վասն է՞ր է. ասացեալ են թէ Եասախ է. և զսուրն մերձեցուցեալ են ի սիրտ նոցա Թէ չը տաք՝ նա՛ կու զարնեմ. եւ սոքա ասացեալ են թէ Սա հին է եւ ձեզ անո՞ւն է որ զայս առնէք. ահա Լ-ակական եւ Խ-ական ըստակ տանք ձեզ[1] և զայս մի՛ առնէք. ոչ լըեալ այլ ըն-կղմնեցուցեալ[2] զնոսա, և խըրեանք քաշելով զչաղ-չուրս նոցա՝ առեալ գնացեալ։ Եւ ի պարսպի տակն զմին հայի վերարկուն հանեալ ի յանձնէն ծեծելով և զանելով։ Եւ այսպիսի խմէին եւ ելանէին ի ճանա-

1) քեզ. 2) ընկղմնեցուցեալ.